«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

# ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

## ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

**ԹԵՄԱ՝** Զոհրապը նորավեպի իշխան
**ԱՌԱՐԿԱՆ՝** Գրականություն
**ՀԵՂԻՆԱԿ՝** Սուսաննա Այվազյան
**ՄԱՐԶ՝** Արագածոտն
**ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ՝** <<Երվանդ. Պետրոսյանի անվան Հնաբերդի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ

# Բովանդակություն

Ներածություն……էջ՝3
Գլուխ 1. Զոհրապի կյանքը……էջ՝5
1.1 Զոհրապը նորավեպի իշխան……..
Գլուխ 2. Զոհրապի
նորավեպերը……էջ՝9
2.1. <<Խղճմտանքի ձայներ>>……էջ՝10
2.2. <<Լուռ ցավեր>> ……էջ՝15
2.3. <<Կյանքը ինչպես որ է >>……էջ՝21
Եզրակացություն……էջ՝24
Գրականության ցանկ……..էջ՝25

# Ներածություն

Գաղափար նորավեպի մասին։

**Նպատակը՝**

- նորավեպի ժանրային պատկանելության ընկալում և բնորոշելու կարողություն։
- նորավեպի գաղափարական բովանդակությունն ընկալելու և մեկնաբանելու կարողություն։
- կերպարների հոգեբանական զարգացման ընթացքը տեսնելու,վերարտադրելու,խոսքը քննելու,դրա մեջ նրա բնավորությունը բացահայտելու կարողություն։

<<Նորավեպը այլ բան չէ, քան չլսված մի իրադարձություն,որը տեղի է ունեցել>>։

Գյոթե

Նորավեպը արձակ, փոքրածավալ ստեղծագործություն է,որը շատ նման է պատմվածքին, բայց կան տարբերություններ,որոնք հաճախ նույնիսկ դժվար է լինում տարբերել իրարից։

Նորավեպի հիմքում սովորաբար ընկած է լինում առօրյա փորձի տեսանկյունից անհավանական պատմություն, երբեմն անեկտոդանման, որի մեջ գրողը խտացնում է անսապասելի բովանդակություն։

Նորավեպի համար բնորոշ է պատմության անսպասելի ավարտ, նրանում գործողությունները զարգանում են սրընթաց ու արագ։

Հեղինակը մի կողմ է թողնում ընդարձակ մանրամասներ, նկարագրություններ և ծանրանում է միայն հանգուցային պահերի վրա, բնության տեսարանների, առարկաների, հանգամանքների և հոգեվիճակների մանրամասն նկարագրությունները նովելի մեջ չեն լինում, սրան բնորոշ է պատմողական չեզոք ոճը, անսպասելի արդյունքը։

Զոհրապի նորավեպերը փոքր ծավալ ունեն, 5-6 էջ են, բաժանվում են մի քանի հատվածների, որոնք գլուխների դեր են կատարում։ Դրանք պատումի հիմնական դրվագներն են, որոնց միջակա փուլերը ընթերցողն ինքն է մտովի վերականգնում։

Փոքր ծավալը գրողից պահանջում է արտահայտչական հատուկ հնարանքներ, հատուկ լեզու։

Նորավիպագրի խոսքը սեղմ է, բառերը ընտրվի են, դարձվածքները այնքան խիտ են, որ հաճախ թևավոր խոսքի նշանակություն ունեն։

Նովելը ձևավորվել է վաղ վերածնության շրջանում և իր դասական ձևով հանդես է եկել իտալացի Բոկաչչոյի <<Դեկամերոն>> գրքում։

Իր հետագա զարգացման ընթացքում նորավեպն ընդլայնում է թեմատիկ ընդգրկման շրջանակները և արձակի տարածված ժանրերից մեկն է դառնում։

Համաշխարհային գրականության նշանավոր նովելիստներ են եղել Մոպասանը, Չեխովը, Մերիմեն։ Հայ գրականության մեջ մեծարժեք նորավեպեր են գրել Գրիգոր Զոհրապը, Նար-Դոսը, Ստ.Զորյանը։

## Գլուխ 1. Գ. Զոհրապի կյանքը

Զգացնել տուր թշնամիիդ, որ ամեն վայրկյան պատրաստ ես պատերազմելու, և նա կհրաժարվի զինու ուժով քեզ անհանգստացնելու մտքից։

Գ.Զոհրապ

Գրիգոր Զոհրապը ծնվել է1861 թ.հունվարի 26ին Կոստանդնուպոլիսում։ Նախնական կրթությունը ստացել է ծննդավայրում՝ Պեշիկթաշի Մաքրուհյան, ապա Օրթագյուղի Թարգմանչաց վարժարաններում։ Նա ստացել է ճարտարագետի ու իրավաբանի մասնագիտություն։

Որպես փաստաբան՝ դառնում է ժողովրդի շահերի պաշտպան։

Գրական գործունեությունը սկսել է բանաստեղծություններով, բայց նորավեպը պիտի դառնար նրա ստեղծագործության հիմնական տեսակը։

Զոհրապի գրական շարժման նշանաբանն էր. <<Գրականությունը ժողովրդյան կյանքեն պիտի քաղվի՝ ժողովրդյան կյանքին ծառայելու համար>>։

Որպես բարձր հեղինակություն՝ Զոհրապը կարծում էր, թե կկարողանա փրկել ժողովրդին։

1895-96 թվականներից հետո եկած մղձավանջային տարիներին, երբ սուլթան Համիդի բռնատիրության պայմաններում գրեթե անհնար էր լուրջ գրականությամբ զբաղվել, երբ մտավորականության մեծ մասը հեռացել էր երկրից, Զոհրապն այն սակավաթիվ գործիչներից էր, որ մնաց Պոլսում և վառ պահեց հայ մշակութային կյանքի մարմրող ջահը։ Որտեղ հայ ժողովուրդը, այնտեղ էլ ժողովրդի գրողը։

Շատերն առաջարկում են Զոհրապին հեռանալ Պոլսից, սակայն նա չի համաձայնում։ <<Որո՞ւ թողում աս անտեր ու անգլուխ ժողովուրդը, չէ ,փախչիլ չեմ կրնար, պետք է պարտքս մինչև վերջ պատնեշին վրա կենալ>>։ Դիմում է երիտթուրքերի առաջնորդներից Թալեաթին՝ բողոքելով հայ մտավորականության ձերբակալության դեմ։ Թուրքական հայատյաց և հայաջինջ քաղաքականության ալիքը հասնում է նաև Զոհրապին։ Նրան ձերբակալում են 1915թ. մայիսի 15-ին և նույն ամսի 20-ին աքսորում։ Անգամ աքսորի ճանապարհին մերժում է փախուստի հնարավոր առաջարկությունները. <<Փախուստը ալ ավելի պիտի կատղցներ

կառավարության հայայկեր ջոլիրը ու պատճառ պիտի ըլլար ավելի մաղձ ու թույն թափելու տարագիր հայության թշվառ ու անհամար բեկորներուն վրա>>։ (Գրիգոր Զոհրապ, էջեր ուղևորի մը օրագրեն, Իզմիր 1922, էջ ժբ)։

Չափազանց հուզիչ են Զոհրապի՝ աքսորի ճանապարհից կնոջը գրած նամակները. <<Սիրասուն կինս, ալ վերջին վարագույրը կսկսի մեզի համար…Ավելին գրելու ուժ չունիմ, թե որ ողջ չի մնամ զավակներուս վերջին պատվերս ու կտակս է զքեզ պաշտեն և սիրտդ չի ցավացնեն,զիս ալ հիշեն։ Ահա միակ հարստությունս. անոնց գրկին մեջ հոգիս տալ, ինչ երանություն, չեմ գիտեր, թե Աստված այս բաղձանքս պիտի կատարե՞>>։

Զոհրապը դաժանորեն սպանվեց աքսորի ճանապարհին, նրա բաղձանքը չկատարվեց։

Սպանությունները երբեք մարդկային չեն լինում, բայց Զոհրապի սպանությանը ամենաանմարդկայինն էր, ճշգրիտ մանրամասները բուն ոճրագործի՝ Չերքեզ Ահմեդի խոսքերից առնելով՝ հաղորդում է թուրք պատմագիր Ահմեդ Ռեֆիգը. <<Զոհրապը ոտքիս տակը առի, խոշոր քարով մը գլուխը ճզմեցի, ճզմեցի, ճզմեցի, մինչև որ սատկեցավ…>>։ Այս սպանությունը հանճարի ու վայրենու, քաղաքակրթության և բարբարոսության ընդհարումն էր, որ կատարվեց նախամարդու գործիքով՝ քարով։

Զոհրապը կյանքից հեռացավ որպես ճշմարիտ ու մեծ հայրենասեր։

Բարբարոսը շարունակում է մնալ նույնը, այսպիսի խոշտանգումներ այսօր էլ է անում ու մնում անպատիժ։

## 1.1Զոհրապը նորավեպի իշխան

Գրիգոր Զոհրապը հռչակվեց <<Նորավեպի իշխան>>, որովհետև բարձր վարպետության հասցրեց գրական այդ տեսակը։ Բերեց իր նյութը, կերտեց իր կերպարները, ստեղծեց իր արվեստը և հայ գրականության պատմության մեջ հաստատեց իր անունը։

Արշակ Չոպանյանը գրել է. <<Այդ արձակ էջերուն մեջ դիտողի և հոգեբանի,վերլուծողի ու քննադատի, բարքերու և տիպարներու հզոր նկարչի ձեռքերն են, որ կտիրապետեն, բայց անոնց վերև մերթ կսավառնի բանաստեղծի ջերմ ու թեթև թևավոր շունչ մը, թունդ ելած սրտի փղձկող հուզմունք մը։ Ատիկա չի տիրապետեր հոն, բարեբախտաբար, որովհետև ատոր համար է, որ իր նորավեպերն այնքան առույգ են, կենդանի ու բնական,բայց թանկագին տարր կկազմե, էական տարր մը, որ անհրաժեշտ է անոնց լիությունը գոյացնելու, զանոնք իրապես զոհրապական դարձնելու համար>>։

Զոհրապը նորավեպի այն վարպետներից է, որոնք բյուրեղացած ձևի մեջ հասել են հոգեբանական խորության և կերտել բազմաթիվ կերպարներ՝ բարձր աստիճանի հասցնելով իրապաշտությունը։

Զոհրապը լայն ընդգրկման գրական գործիչ էր։

Հակոբ Օշականը նրա մասին այսպես է արտահայտվել. << Իրապաշտ շարժումին ամենեն խռովիչ, պայծառ երախտապարտ դեմքը, չըլսելու համար ամենեն կատարյալ>>։ Այս իրապաշտ հայացքով էլ նա փորձեց բացահայտել զգացումը։ Զոհրապը որքանով իրապաշտ էր որպես գրող, նույնքան իրատես ու ճշգրիտ էր որպես գրական քննադատ և տեսաբան։

Զոհրապը գրել է չորս տասնյակ նորավեպեր, որոնք, սակայն, իրենց գեղարվեստական կատարելությամբ անփոխարինելի տեղ ունեն մեր գրականության մեջ։

Բազմազան ապրումների ու հոգեվիճակների միջոցով Զոհրապն արտացոլում է տարբեր խավերի հոգեբանությունը և մշակում ուրույն հայացք մարդու երջանկության և ողբերգության ակունքների մասին։ Գրողը հաճախ է քննում դրամատիկ վիճակներ, լոռ ցավեր և ողբերգական վախճաններ։Նրա երկերի մեջ

շատ են կործանվող ու  տառապող հերոսներ։ Այս բոլորին, սակայն, գրողը նայում է սթափ հայացքով, որպես ճշմարիտ արվեստագետ, նա խուսափում է էժանագին, նյարդերի վրա ազդող բռնազբոսիկ լուծումներից։Նա իր վերլուծությունները կապում է հերոսներին  շրջապատող բարոյական մթնոլորտի և սոցիալական երևույթների հետ։ Այդ մթնոլորտում զոհ են գնում զգացող,ազնիվ,խորհող անհատները։ Միջավայրի ու անհատի այս յուրօրինակ փոխազդեցության քննությունն էլ հզոր լիցքեր է տվել Զոհրապի գեղարվեստական երկերին։

Զոհրապի արվեստի գաղտնիքները բացելու համար շատ կարևոր է նյութի ընտրության եղանակը։ Այդ կապակղությամբ նա գրում է. <<Մեծ պատահարները զիս անտարբեր կթողուն։ Բայց մանր դեպքերը՝  չնչին ուրիշներու աչքին լուրջ խորհրդածություններու նյութ են ինձի>>։ Այստեղ գրողը դրսևորում է երկու կարևոր արժանիք. մանր դեպքերի միջից ընտրում է այն,որն ունի ներքին խոր իմաստ, մյուս կողմից՝  այդ աննշան թվացող դեպքը դարձնում է մեծ կյանքի արտացոլման միջոց։ Այս բարձր արվեստին նա հասնում է իր յուրօրինակ տաղանդի շնորհիվ։

Զոհրապն ունի վերլուծական, խոհական բացառիկ ձիրք,որի շնորհիվ  դիտում է առարկան, դեպքը, մարդկանց արարքն ու ապրումը, բացում է այդ բոլորի ներքին կապը, հասնում ուրույն կենսափիլիսոփայության։ Գրողի տաղանդի բնորոշ հատկանիշներից է էականը երկրորդականից զատելու ձիրքը, սեղմ խոսելու արվեստը, չափի զգացումը, նա բացում է դեպքը, տեսնում նրա միջուկը, այսինքն իմաստը, որով և սկսվում է հոգեկան շարժումը։ Յուրաքանչյուր նկարագրություն, խորհրդածություն և ապրում, փոքր հյուսվածքում գրավում է կարևոր տեղ։ Իմաստ է դրվում  ամեն բառի, տողի, պատկերի, տեսարանի ու դեպքի մեջ։ Այդ նորավեպերը ամփոփված են խորհրդանշական խորագրերով երեք ժողովածուներում՝  <<Խղճմտանքի ձայներ>>, <<Կյանքը ինչպես որ է>> և <<Լուռ ցավեր>>։

## Գլուխ2. Զոհրապի նորավեպերը



## 2.1. <<Խղճմտանքի ձայներ >>




<<Խղճմտանքի ձայներ>> ժողովածուն լույս է տեսել 1909թ.ին,այս ժողովածուն 8 նովելներից է կազմված (<<Փոստալ, <<Այրին>>, <<Ճեյրան>>, <<Թեֆարիկ>>, <<Սառան>>, <<Մագթաղինե>>, <<Խարիսխ>>, <<Տալիլա>>:

Հերոսները իրենց միջավայրով կենցաղով, հոգեբանությամբ, կյանքով ու մահով տարբեր են իրարից: Բայց հեղինակի հայացքը բոլորի հանդեպ նույնն է՝ մարդկային խղճմտանքի ձայնը արթնացնել նրանց նկատմամբ:

<<Այրին>> Զոհրապի լավագույն նորավեպերից է, որն իր բովանդակած նյութով շատ բնորոշ է հայկական կյանքին: Հայ ժողովրդին պատուհասած աղետներից է պանդխտությունը, ապրուստ որոնելու հույսով շատերը հեռացել են իրենց բնակավայրերից, ինչն էլ իրեն հետ բերել է անցանկալի հետևանքներ: Մարդիկ բարոյալքվել են, ընտանիքները՝ քայքայվել:

Գյուղը տնքում է հարկերի ծանրության տակ: Կարիքը, թուրքական տերունական պարտքերը և վաշխառուների կամայականությունները գյուղացիներին ստիպում են բռնել Պոլսի ճանապարհը:

<< Այրին >> նորավեպի մեջ Զոհրապը պատկերել է և' գավառում մնացածների կյանքը, և' պանդխտության մեկնողների:

Մեկնողներից մի մասը վերադառնում է, մյուս մասը՝ ոչ: Չվերադարձողներից է Մարտիրոսը:

19ամյա Մարտիրոսը ամուսնանում է Զարդարի հետ և, միայն երկու ամիս ամուսին տեսած նորահարսը, դառնում է այրի:

Մարտիրոսը, ով աչքի էր ընկնում իր արտաքինով, դառնում է մեծ քաղաքի սիրելին: Անբարո կյանքին վարժվելով՝ մոռանում է ընտանիքը, նորապսակ կնոջը: Մարտիրոսը մոռանում է պատիվ ու սրբություն, դառնում անպետք մարդ, դավաճանում կնոջը, լքում ընտանիքը:

Ավերվում է Զարդարի կյանքը: Նա արդեն ավելորդ մարդ էր այն տանը, որտեղ հարս էր գնացել, չնայած իր ուսերի վրա տանում էր ընտանիքի հոգսը: Այս անձնազոհ կնոջ վրա են բարդում ընտանիքը լքած ամուսնու մեղքը:

Անցնում են տարիները, ճերմակում են Զարդարի մազերը: Ճակատագրին հնազանդ կինը ամեն օր գնում կանգնում էր գյուղի ճանապարհին՝ արտի եզրին և սպասում ամուսնուն՝ Մարտիրոսին, չնայած համոզված էր, որ ամուսին կոչվածը այլևս հետ չի վերադառնալու:

<<Գիտեր, ստույգ գիտեր ալ, որ ամուսինը չպիտի գար, բայց իրիկունը, առանց ուզելու, քայլերը կ'առաջնորդեին զինքը այն արտը, ուրկե վերջին անգամտեսած էր ու Պոլիս ճամփած էր իր երիտասարդ էրիկը: Հոն, կանգուն ու առանձին, հեռուն տարածվող ընդարձակ ու հարթ դաշտին վրա պտտեցնելով իր հետախույզ նայվածքը Այրին դեռ կը սպասեր>>:

Վերջում Մարտիրոսն այլևս գումար էլ չէր ուղարկում՝ հարկ ու տուրք վճարելու համար: Տնեցիներն էլ Զարդարին սպառնում էին, եթե այդպես շարունակվի, նրան տնից դուրս կհանեն:

Լքված հարսի սպասումները հուզիչ են: Բոլորը գտնում են,որ Զարդարն է մեղավոր, որ ամուսինը լքել է հայրենի տունը:

Մարտիրոսը հաշվարկով ամուսնանում է պարտիզակցի սպասուհու հետ,ով (ավելցուցած բոլոր ստակը, իր չորս հազար ղրուշը կուտար իրեն, եթե զինքը կնության առներ):

<<Գաղտնի ու անձայն պսակվեցան, գողերու պես, առանց պատրիարքարանին լուր տալու, բարեկամ մը հրավիրելու>>։

Ո՞ւր մնաց սերը։

Շատ ընդգրկուն է այս նովելը՝ հերոսների կյանքի ու ճակատագրի նկարագրություն, գավառի ու մայրաքաղաքի կյանքի տեսանելի պատկերներ։ Հենց սա է Զոհրապի վարպետությունը, վեպի ընդգրկում ունեցող ստեղծագործությունը դարձնել նովել։

Պանդխտությունն ու արտագնա աշխատանքի մեկնելը այսօր էլ Հայաստանում անցանկալի ու տխուր իրողություն են։

<<Փոստալը>> նորավեպը ևս դժբախտ կնոջ պատմություն է, մի խորունկ դրամա։ Գեղջուկ աղջիկ Տիգրանուհին, կարիքից ստիպված սպասուհի է դառնում քաղաքում։ Միջնորդ կինը՝ հաճի Տյուրիկը, կատարում է մեծահարուստի տիկնոջ՝ Սուրբիկ հանըմի հատուկ պատվերը։ Վերջինս պատվիրել էր մի գեղեցիկ աղախին գտնել, որը նաև պիտի զբաղեցնի իր երես առած,վատ վարքի տեր տղային։

Որբ ու աղքատ աղջիկը ընկնում է ծուղակը։ Մոր գիտությամբ որդին խաբում է ջահել կնոջը՝ խաղալով վերջինիս պատվի հետ։ Կեղծավոր միջավայրը անբարոյական է համարում անօգնական աղջկան, միայնակ մնացած կնոջը նեցուկ է դառնում նորածին երեխան։

Բայց իջնում է նոր հարված. մեռնում է երեխան՝մորը թողնելով խոր սգի մեջ։

Տիգրանուհու միակ մխիթարությունը մնում է որդու շիրիմը։ Որդու թաղման վրա է ծախսում ողջ վաստակը։ Մեռելոցի օրերը ցնծություն էին կնոջ համար։ Չէ՞ որ նա պիտի գնար զավակին տեսության։ Սառն ու ցուրտ աշխարհում մոր հոգին ջերմացնում էր որդու շիրիմը։ Մայրը հողաթմբի մոտ չի լալիս. <<Պզտիկ տապանին քով չոքած երկարբարակ ու ցածր ձայնով կխոսեր իր զավկին հետ, անոր մանուկի բարբառով>>։

Հոգեբանորեն շատ հուզիչ է այս հատվածը։ Հերոսուհին օժտված է մայրական քնքշանքով, նուրբ ցգացմունքներով։

Զոհրապը հակակրանքով է խոսում վերնախավի մասին, ատում է տերերի փչացած բարքերը և կեղծավոր միջավայրը։

Քաղքենի հոգեբանության դեմ է ուղղված նաև <<Ճեյրան>> նորավեպը։ Չերքեզ տասնապետ Քրանտյուքը տասը տարի հետևել է սիրած աղջկան՝ Ճեյրանին, որին ավազակապետ Նյուշը կնության է տարել։ Բայց Քրանտյուքը իր սերը չի մոռանում։

Շարունակվում է մի խուլ պայքար՝ տասնապետի և ավազակապետի միջև։ Բազում անգամ տասնապետը կանգնում է մահվան դեմ։ Ի վերջո նա վրեժ է լուծում ավազակից։

Կյանքի գեղեցկությունը մարմնավորող տասնապետը մտածում է ոչ թե իր գլխին կախված մահվան սպառնալիքի, այլ սիրած աղջկա՝ Ճեյրանի մասին։

Սիրո հոգեբանության վառ օրինակ է <<Թեֆարիկը>> նորավեպը։ Այս նորավեպը գրված է անտարակույս ստեղծագործական երջակայության այն պահերին, երբ գրիչը չի հասնում մտքի ու սրտի թելադրանքների հետևից, երբ հեղինակի հոգին՝ զզված իրականության այլանդակություններից, շատ խիստ մարդկայնության և գեղեցկության կարոտն է զգացել։ <<Թեֆարիկը>> այդ կարոտի արդյունքն է։

Հոգու առեղծվածները վերլուծող արվեստագետը՝ շարունակում է սիրո թեմայի մեջ քննել կնոջ երջանկության խնդիրը։

Հոգեբանական փշրվածքի դառն հուշերով Պոլիս եկավ Աշխենը։ Երիտասարդի հանդեպ արթնացած սիրո զգացումը երջանկության վերադարձ էր հուշում նրան և նվիրումի անսահման ձգտում։ Որքան մարդկայնություն, սիրո ի՞նչ բյուրեղյա մաքրություն, հուզական չպեղված գանձեր կան այս լեռնեցի մանկամարդ կնոջ մեջ, և այս ամենը պատկերված է հոգու ողջ գիտակցությամբ։ <<Թեֆարիկը >> քնարական մեծ տարր ունեցող նովել է, և նրա հերոսուհին՝ Աշխենը, նրա սերը, ապրումները պատկերված են քնարական ջերմությամբ, որը պատշաճում է Աշխենի կերպարին, նրա վշտին։ Աշխենին կարիքն է բերել քաղաք, նա ծառայում է որպես սպասուհի, նա կորցրել է ամուսնուն և ծանր վիշտ ունի։ Ամուսնու հիշատակով ապրելը՝ Աշխենի միակ նպատակն է, նվիրական ցանկությունը, նա վստահ է, որ սիրո մեջ նոր զգացում չի կարող թափանցել իր սիրտ։ Բայց բնության

օրենքները անքննելի են. Աշխենը անմնացորդ սիրահարվում է, նա իր սերը տվել էր ամբողջովին, այդ անմնացորդ ու կաթոգին սերն էլ նրան տանում է կործանման։ Կանացի նրբազգացությունը հանդիպում է արդեն ձանձրացած երիտասարդի վանող արհամարհանքին, երբ վերջինս կանացի հրապույրներով ու հաճույք վայելելու ներքին մղումով, գնում է նրա մոտ։ Աշխենը երիտասարդին դուր գալու համար թունդ օծանելիք է ցանում իր վրա, տղան դժգոհում է, խեղճ աղջիկն ամբողջ գիշեր լվացվում է, հիվանդանում։ Նա չի դժգոհում, իր այդ վիճակից էլ <<գոհ>> է, որ <<անձնվեր նոր ապացույց>> ունի։

Անտրտունջ ու լուռ մահանում է։

Զոհրապն ընտրում է լարված ու անսովոր հոգեվիճակներ, իր հերոսներին դնում ծայրաստիճան դժվարին կացության մեջ։

<<Սառան>> նորավեպի հերոսուհին ամուսնու դագաղի մոտ, բոլոր հաշիվները թվաբանորեն լուծելուց հետո, սեր է առաջարկում իրեն վաղուց հետապնդող երիտասարդին։ Որքա՜ն անմեկնելի է կնոջ առեղծվածը։ Զոհրապը ահարկու և ռամիկ է համարում այդ տափակ հոգիներին, իսկ ճշմարիտ գեղեցկությունը տեսնում է հասարակ մարդկանց մաքուր ու պարզ կենցաղի ու ազնիվ ապրումների մեջ։

## 2.3. <<Կյանքը ինչպես որ է>>




<<Կյանքը ինչպես որ է>> կարգախոսը, որ հեղինակը խորագիր է ընտրել իր երկրորդ ժողովածուի համար,ռեալիստական ուղղության նշանաբաններից մեկն է: Այդ ուղղության սկզբունքները մշակողներից մեկն էլ Գրիգոր Զոհրապն է, ով իր նորավեպերով գործնականորեն հաստատում է դրանք:

Այս շարքի նորավեպերն են՝ <<Ճիտին պարտքը>>,<<Երջանիկ մահ>>,<<Այինկա>>, <<Դիմակը>>, <<Ժամին բակը>>, <<Ճոկո>>, <<Փութուրլընն>>, <<Վերադարձ>>, <<Արմենիսա>>,<<Կարծեմ թե>>, <<Հակոբիկ>>:

Այս շարքի գրվածքները բաժանվում են մի քանի խմբի՝ սիրային, խոհական, փիլիսոփայական, երգիծական: Սակայն բոլորն էլ ունեն մի ընդհարուր գիծ՝ մարդկային հոգեբանությունը, արարքները, դրանց դրդապատճառները, կենցաղային ու հասարակական հարաբերությունների չերևացող ծալքերը բացահայտել ու ցուցադրել այնպես, ինչպես որ է:

<<Կյանքը ինչպես որ է>> ժողովածուի լավագույն նովելներից է <<Ճիտին պարտքը>>: Զոհրապը այս նովելում վերստեղծել է կյանքի և հոգու պատկերը և բացահայտել մարդկային ողբերգության սոցիալական ակունքները:

Նորավեպի հերոսը՝ վաճառական Հուսեփ աղան, սնանկացել է՝ դառնալով հասարակ միջնորդ: Կինը մահացել է՝ նրա խնամքին թողնելով երկու մանկահասակ դուստրերին:

Ծերունին այլևս չի կարողանում հոգալ տան ամենօրյա կարիքները և երկու աղջիկների ապրուստը: Շատ տպավորիչ է Հուսեփ աղայի նկարագրությունը. նա քայլում է փողոցով՝ ձեռքին բռնած մի պայուսակ: Պայուսակը հոգսերի ու գոյության խորհրդանշանն է, Հուսեփ աղայի անբաժան ընկերը:

<<Այս մարդուն բոլոր հոգնաջան վաստակը ու քրտնաթոր գործունեությունը անոր մեջն էր, դանայան տակառ, զոր կը լեցներ շարունակ երեսուն տարիներե ի վեր, առանց հաջողելու>>:

Պայուսակը համեմատելով հունական դիցաբանությունից հայտնի հատակը ծակ տակառի հետ՝ Զոհրապը ակնարկում է նյութական զրկանքների հարատևությունը:

Նորավեպը բաղկացած է Հուսեփ աղայի անցած ու ներկա կյանքի ութ առանձին դրվագներից, որոնք կազմում են փոքրածավալ պատումի ութ համարակալված գլուխները:

Հուսեփ աղան մաքառում է հացի համար, բայց ոչ ոք գործ չի տալիս, ոչ ոք չի օգնում, ծանոթները դառնում են անծանոթ:

Վատ օրերին հետևում են ամենավատերը: Երեխաների մոտ թաքցնելով վիշտը՝ Հուսեփ աղան գիշերները մեռած կնոջ նկարի առջև կանգնած,քաջալերություն է խնդրում: Ապրուստի բոլոր աղբյուրները ցամաքում են,նա վաճառում է տան բոլոր իրերը:Աղջիկները տեղյակ չեն հոր գործերից և անմեղ խնդրանքներ ու պահանջներ կներկայացնեն,որ շուտ տուն գա, իրենց <<պտտցնելու>> տանի,որ <<միսը չմոռնա>>, <<քիչ մըն ալ պտուղ>> բերի, <<պանիր ալ>>: Անկարևոր թվացող այս մանրամասները ցույց են տալիս Հուսեփ աղայի ընտանիքի իրական կացությունը և հասկանալի են դարձնում նրա հոգեկան տառապանքները:

Նախավերջին գլուխը ողբերգական հանգուցալուծման պահն է: Հուսեփ աղան անբողջ օրը ձեռնունայն թափառել է քաղաքի փողոցներում ու շուկաներում, հանդիպել է միայն անբարյացակամ, մերժող, <<խոժոռ ու դաժան դեմքերի>>:

Նա չի կարող դատարկ վերադառնալ աղջիկների մոտ։ Շատ նուրբ է դիտվում ապրումների ընթացքը։ Հուսեփ աղան ուզում է անցնել կամուրջը, բայց փող չունի վճարելու։ Նույն պահին նա զգում է, որ ինչոր տեղ մեռացել է իր կյանքի անբաժան ընկեր պայուսակը։ Վազում է, գտնում։ Նա ուժ չունի կռվելու կարիքի ու հոգսերի դեմ։

Հուսեփ աղան դառնում է անողոք կյանքի հերթական զոհը։

Վերջին գլխում խորհրդանշական պատկերներով նկարագրվում է, թե ինչպես Հուսեփ աղայի անշնչացած մարմինը, քարով լցված պայուսակը վզից կախ, օրորվում էր ալիքների վրա՝ լայն բացած աչքերը հառած երկնքին. <<Ջուրին մեջ երկուքն ալ կապված էին, ինչպես կյանքին մեջ ալ զատված չէին իրարմե։ Կապն անեղծ կմնար ամեն տեղ>>։

Վերջում մի խորիմաստ համեմատությամբ գրողը հիշեցնում է դրամի վրա հիմնված կյանքի դաժանությունը։ Հուսեփ աղան օրորվում է ջրերի վրա՝ <<Մեծմեծ բացված, կարծես թե զարմացած աչքերով ու անթարթ, համառ նայվածքով մը դեպի երկինք՝ ու լուսինը իր տասնհինգին մեջ,արծաթե կլոր ու հսկա դրամի մը պես կը փայլեր>>։ Այդ անկուշտ պայուսակը վերջապես լցվել էր և գտել իր տեղը։ <<Այդ պայուսակը՝ իր անողորմ համառությամբ, իր հուսահատեցուցիչ դատարկությամբը, մարդոց ճիտին պարտքը կը մարմնացներ անշուշտ, իր ճշմարիտ տեղը ուրեմն, անոր վիզն էր, ճիշտ հոն, ուր հաստատված էր հիմա>>։

<<Ծովուն վրա կծփար, կօրորվեր, կըտատանվեր, կռնակին վրա պառկած, բոլոր հասակով ջուրին երեսը>>։

Այս շարքի նովելներից է <<Այինկա>>ն։ Նորավեպում Զոհրապն առանձն ուշադրություն է դարձնում սիրո խնդրին։ Սիրո մեջ ավելի վառ են դրսևորվում մարդու բուն հատկանիշները։ Նորավեպի հերոսներն են Պերճուհին և երկու եղբայրները՝ Հակոբոսն ու Սահակը։ Մի հուզիչ դրամա է ձևավորվում նրանց հոգեկան առնչությունների միջոցով։

Պերճուհին սիրել է փոքր եղբորը՝ Սահակին։ Բայց հետո հիասթափվել է, քանի որ գյուղում շատերը զբաղվում են ծխախոտի մաքսանենգությամբ, իսկ Սահակը ծառայության է մտել ոստիկանությունում։ Գյուղացիները դատապարտում են

իրենց գործին խանգարող, իրենցից հեռացած Սահակին։ Պերճուհին այինկաճիի աղջիկ էր և չի ներում Սահակին։ Նա դառնում է Սահակի եղբոր՝ Հակոբոսի նշանածը։ Հակոբոսը այինկաճիների խիզախ առաջնորդն էր։Եղբայրը եղբոր դեմ՝ գործի մեջ և երջանկության ճանապարհին՝ ահա մի դրամատիկ վիճակ, որը սուր ընթացք է տալիս նորավեպի գործողություններին։

Բարդ է մարդու ներաշխարհը, լի՝ առեղծվածներով, առաջին սերը չի մոռացվում։ Հանդիպում են Սահակն ու Պերճուհին։ Մի փոքր բացատրությունից հետո Պերճուհու մեջ արթնանում է անթեղված զգացմունքը՝ հին սերը Սահակի նկատմամբ։

<<Կեցի'ր, ատեն մը կսիրեիր զիս, եղբորս հետ չնշանված դեռ, կը հիշե՞ս աղբյուրն քով խոսածներդ։

Ես եղբորդ նշանածն եմ, մ'ի խոսիր հետս։

Սահակը ձեռքը բռնել ուզեց, ու աղջիկը քաշվեցավ ետ>>։

Սերը հզոր է, ամուր, ինչպես երկաթը, չի կարող ծռվել ծառի ոստի պես։ <<Իմ սերս ամուր է աս երկաթին պես, քուկդ ծառի մը ոստին պես ամեն դի կը ծռվի, պզտիկ եղբորմեն մեծ եղբորը, Սահակեն Հակոբոսին կը դառնա>>։ Վաղեմի զգացումը արթնանում է. սիրած տղամարդու արցունքի կաթիլը, ջերմ խոսքն ու կարոտը շարժում են աղջյա հոգին։ Պերճուհին, իրիկնամուտի ստվերների մեջ կանգնած,դեռ սպասում է Սահակին. <<Սահակն մեկնել ուզեց, ու աղջիկը չթողեց այս անգամ։Կեցի'ր, տե, քիչիկ մըն ալ մնա>>։

Սիրո դրաման ստանում է ինքնատիպ լուծում։ Իրար դեմ են դուրս գալիս երկու եղբայրներ՝ Սահակը ոստիկանների հետ, Հակոբոսը՝ այինկաճիների խմբով։

Ծանր են Սահակի ապրումները։ Ինչպե՞ս ապրել, սիրո ցավի մեջ նա չի զգում շրջապատը, չի լսում մաքսանենգների զգուշացնող խոսքը։ Պերճուհին վաղը գուցե դառնա եղբոր կինը։ Նա անտարբեր է դառնում կյանքի ու մահվան նկատմամբ։ Եղբոր գնդակից եկած մահը փրկություն էր. <<Մեռնիլ, մեռնիլ, վախեցած էր երբեք մեռնելե, և եղբորմեն եկող այս հարվածները փրկության մահ մը կխոստանային իրեն>>։

Հոգեբան գրողը անսպասելի  լուծում է գործողությունը։ Սահակը զոհվում է։ Մայրը կսկծից մեռնում է։ Հակոբոսն էլ ստանում է Սահակի ընտանիքին տրված թոշակը։ Ոչ ոք չի հասկանում Պերճուհու հոգու առեղծվածը։ Նա հետ է տալիս Հակոբոսի նշանը և դառնում <<սևեր հագնող աղջիկ մը, որ չամուսնանար>>։ Սերը ի վերջո հաղթում է, Պերճուհին Սահակի մահից հետո ծանր դրանա է ապրում, և աշխարհն ու կյանքի հաճույքները նրա համար կորցնում են իրենց հմայքը։

Կյանքի գեղեցկությունները մարմնացնող նովել է <<Երջանիկ մահը>>։ Այս նովելում կյանքը պատկերված է այնպես, ինչպես կա։ Նովելի հերոսուհին անանուն գեղեցկուհի է, ով տառապում է սրտի անբուժելի հիվանդությամբ։ Բայց վերջինս ապրում է այնպես, ինչպես ինքն է ցանկանում։ Նա հաշվետու չի ոչ մեկի։ Ամուսինը <<հոր մը թույլտվությունները, ազատությունները թողած էր անոր>>։ Իր մասին պտտվող բամբասանքների վրա միայն ծիծաղում էր։ Գեղեցկուհին գիտի իր հրապույրների գինը, հպարտանում է դրանցով ու հպարտությամբ բաշխում է աշխարհին՝ ուրախություն, զմայլանք, բոլորին երջանկացնում է իր ջերմությամբ, ինքն էլ երջանիկ է դրանով։

Վերջինիս նշանաբանն է. <<Կինը ծիծաղ մըն է, պետք չէ, որ լացի փոխվի>>։ Կինը մշտապես շրջապատված էր երիտասարդ երկրպագուներով։ <<Կը նախանձեին, կը չարախոսեին իր վրա. անոր հանարձակ վարմունքը իրենց պատկերված մեղքերուն, իրենց շինծու ամոթխածությանը դեմ պայծառ արևի մը հալածիչ լույսին կը նմաներ>>։

Վերջին պարի հափշտակության մեջ է խտացված հերոսուհու <<կյանքի բոլոր երանգները>>։ Սիրած երիտասարդի հետ կինը ամբողջ էությամբ ապրում և ապրեցնում է իր անցնող ջահելության, կանացիության հրապույրներով։ <<Զմայլված կը դիտեինք զիրենք. պար մը չէր այս, այլ շլացուցիչ բան մը, եթերային ու ցնորական սլացում մը, հափշտայություն մը, քերթված մը>>։ Հեղինակի եզրակացությամբ երջանիկ մահը հենց սա է. <<Պաշտելի ու պաշտված կին մնաց մինչև վերջին վայրկյանին ու ընդհանուր զմայլումով մը ողջունված իր սիրած տղուն թևին  վրայեն գնաց հեռացավ անիկա>>։

<<Ժամին բակը>> նորավեպը իրական կյանքի պատկեր է, ուր ոսկին ցանկացած հարց լուծում է: Տեր Աբրահամը աստվածավախ մարդ է: Ապրում է համեստ կյանքով հավատում է Աստծուն ու արդարությանը: Մի անմաքուր արարք փորձության է ենթարկում նրա հավատը մարդկանց և Աստծո նկատմամբ: Թաղական խորհուրդը քննում է մեծահարուստ Նիկողոս աղայի թաղման խնդիրը: Հանգուցյալի հարազատները ցանկանում են նրան թաղել եկեղեցու բակում և մեծարել որպես բարերարի: Բայց Նիկողոսը եղել է հռչակաոր խաբեբա ու ավազակ, նա կեղծել է երդումներ, գողացել ավանդներ, պատվազրկել ջահել աղջիկներին: Դա եկեղեցու պաշտոնյաների համար արգելք չի, ոսկին խնդիրը հեշտությամբ լուծում է: Չարագործին թաղում են եկեղեցու բակում, որպեսզի նրա հարազատներից ստացած ոսկով վերանորոգեն փլվող եկեղեցին: Դարձյալ մի առևտրական գործարք է կնքվում Աստծո հետ:

Այս դեպքը ծանր ազդեցություն է թողնում տեր Աբրահամի վրա: Ոսկին գրավում է բոլորին, իսկ վերջինիս բողոքները ապարդյուն են անցնում: Եկեղեցու պաշտոնյաները մտածում են ունևորներին սիրաշահելու մասին: Եկեղեցու բակում թաղված ավազակի անունը զարդարում է նորոգված զանգակատան ճակատը:

Տեր Աբրահամը անվերջ տանջվում է՝ ամբարտավան մեծահարուստի շիրմաքարի պատճառով և շատ ծանր է ընդունում այս կեղծիքը: Հոգեկան մի անբուժելի վերք է բացվում ազնիվ մարդու հոգում: Նա այնպես է քայլում փողոցում, որպեսզի մարդկանց երեսը չտեսնի, առավոտներն էլ եկեղեցի ուշ էր գալիս և այնպես անցնում, որ ավազակի գերզմանը չտեսնի: Աստծո տան մեջ տեղի ունեցած անամոթ գործարքը խաղտում է հավատը կյանքի օրենքների և մարդկանց բարոյականի նկատմամբ: Այդ հարվածին նա չի դիմանում. <<Քիչ ետքը, անանուն հիվանդություն մը, որ հյուծում մըն էր ավելի,քան թե մարմնավոր ախտ մը, անկողին ձգեց զինքը>>: Մեծ իմաստ ունի <<անանուն հիվանդությունը>> բնորոշումը, այդ հիվանդությունը գալիս է դրսից, իրականության ճնշումից՝ տառապանք բերելով ազնիվ հոգիներին: Այդ հիվանդությունը Զոհրապը համարում է քաղքենի միջավայրի անամոթ գործարք:

## 2.2. <<Լուռ ցավեր>>




<<Լուռ ցավեր>> ժողովածուն լույս է տեսնում 1911թ., ծավալով ամենամեծն է,նրանում 15 նովելներ կան: Այս շարքում ևս խորությամբ է բացվում հոգեբանական զննումների միջոցով մարդկային ներաշխարհը թափանցելու զոհրապյան արտասովոր տաղանդը: Դրանք են՝ <<Զաբուղոն>>, <<Ռեհան>>, <<Անդրշիրիմի սեր>>, <<Լուսահոգին>>, <<Մամայիդ բարև ըրե>>, <<Մյուսը>>, <<Արջի սեր, արջի բարի>>, <<Կատակ>>, <<Ֆուրթունա>>, <<Մեղա տե՛ր>>, <<Պարահանդեսին վաղորդայնը>>, <<Կապիկը>>, <<Զմարախտա>>, <<Մարապետը>>, <<խնդուքը>>:

<<Զաբուղոնը>> նորավեպում քննվում է մարդու բարոյական գեղեցկության խնդիրը: Հույն երիտասարդ Զաբուղոնը գող է, բայց ոչ այն անճարակներից ,որոնք իրենց կյանքը բանտերում են անցկացնում, ոչ էլ այն ավազակներից, որոնք

գողանալու համար թափում են անմեղ մարդկանց արյունը։Երկաթագործի նախկին աշակերտը, որ հմտությամբ բացում է բոլոր կողպեքները, բնավորությամբ բարի և անշահախնդիր մարդ է։ Նա գողանում է հենց այնպես՝ լոկ սնապարծությունից և հետաքրքրությունից։ <<Հիմա արվեստասերի մը պես կապրեր, գողանալով, թալանելով շարունակ, ավելի սնապարծութենեն, քան թե իրական չարութենեն մղված։ Կը բավեր, որ իր ճարտարության փորձը տար ամենեն անմատչելի կարծված տունները կողոպտոլով, ու հոժարությամբ ետ պիտի տար գողոնը, թե որ բռնվելու վախը չըլլար>>։

Բայց պատանին ունի մի թաքուն, նվիրակամ աշխարհ. նա ապրում է երջանիկ սիրո զգացումներով, սիրում է Վասիլիկին։ Աղջկան գրավում է տղայի խորհրդավոր փառքը, որ մի փոքր էլ տարածվում է իր վրա։ Նրան գրավում են խորհրդավոր հանդիպումները՝ մարդկանցից ծածուկ, միայն գիշերը…Բայց հետո աղջկան էլ չի բավարարում թաքուաան սերը, նա ուզում է իր սերը հայտնի անել ամենին, ամուսնանալ օրցերեկով, որպեսզի մարդիկ տեսնեն։ Զաբուղոնը չի հասկանում Վասիլիկի պահանջը։ Եվ աղջիկը, արդեն ձանձրացած թաքուն սիրուց, մի օր տղային նենգորեն մատնում է ոստիկանների ձեռքը։

Բանտում, դավից անտեղյակ պատանին, մենության մեջ շևերեք տարի մտածում է սիրած աղջկա՝ Վասիլիկի մասին։ Զաբուղոնը ինքն էր ստեղծել սեփական պատրանքների աշխարհը։ Վասիլիկն էլ նրա համար ոչ թե իրական կին էր,այլ այդ անիրական աշխարհի մի մասնիկը։ Այդ պատճառով էլ, երբ անասելի դժվարությամբ պատանին փախչում է բանտից և շտապում է տեսնել սիրած աղջկան, միանգամից փուլ է գալիս երազային աշխարհի բոլոր հենարանները։ Զգաստացած երիտասարդը <<կը խորհի, որ այդքան ծանրագին ձեռք անցուցած ազատությունը բանի մը չի ծառայեր և ուսերուն կը ծանրանա>>։ Նա հանդիպել էր անսպասելիին. Վասիլիկի մոտ իր պակասն լրացրել էր մի ուրիշ տղա։ Վասիլիկը ծախել էր իր պայծառ ու մաքուր սերը։ Տղան կարող էր վրեժ լուծել, բայց մի ուրիշ վեհ զգացման՝ արհամարհանքի առաջ վրեժը տեղի է տալիս։ Նա գտնում է, որ այդ չնչին մարդիկ չարժեն իր վրեժխնդրությանը։ Երազը փշրվել էր։ Հպարտ

Զաբուղոնը կորցնելով սերը՝ վերադառնում է բանտ, որտեղից անասելի դժվարություններով դուրս էր եկել ։

Այս շարքի լավագույն նովելներից է << Մեղա,տե՛ր…>>ը։ Նորավեպի հերոս Մարտիրոս աղան աստվածավախ, բարի մարդու հռչակ է վայելում։ Մեծազոր հարուստը իր աղոթքներով մրցում է եկեղեցու պաշտոնյաների հետ։ Բայց ո՞վ է այս <<աստվածավախ>>մարդը։ Նա Պոլիս է եկել Ակն գյուղաքաղաքից՝ 18 տարեկանում։ Այստեղ նա ամեն օր անկեղծ աղոթել է Աստծուն՝ աղքատությունից վեր բարձրանալու և հարուստներին հավասարվելու համար։ Բոլոր առևտրական գործարքնորի հաջողությունը համարել է իր ջերմեռանդ աղոթքների վարձատրությունը ։

Վաճառականը առևտուրը խառնում է աստվածասիրության հետ։ Կյանքում միայն մի անգամ է նա վարանում.մահամերձ հարուստ բարեկամը նրան է կտակում իր ողջ ավանդը՝ ազգականներին ու ազգին բաժանելու խնդրանքով։ Մարտիրոս աղան շփոթվում է,որոշում է խեղդել հիվանդին՝ մեծ գումար յուրացնելու համար։ Բայց հիվանդը մեռնում է,և նա տիրանում է ողջ հարստությանը։ <<Մեղա, տե'ր>> ասելով՝ թողություն է խնդրում Աստծուց և շարունակում գողությունն ու առևտուրը։ Նովելում Զոհրապը բացում է չարագործի բացասական գծերը և կեղտոտ ներքինը։ Կարծես առևտրական գործարք է կնքվում Աստծո և չարագործի միջև։

<<Արջի սեր, արջի բարի>> նորավեպում Թագուկ տուտուն օժտված է մարդկային լավագույն գծերով։ Նա այն անսահման բարի անձնավորություններից է,որոնք գոյամարտի բախումների մեջ գերադասում են զոհ լինել, քան վնասել ուրիշի։ Նրա հոգու գեղեցկությունն ու բարությունը ընդգծելու համար Զոհրապը ստեղծել է հետևյալ համեմատությունը. <<Նա կհիշեցնե այն չքաղված խաղողի հատիկը, որ կեցած տեղը բիրտ հպումներե հեռու քոռոմելով,ավելի ևս կը քաղցարանա, չամչի կը վերածվի>>։

Թագուկ տուտույի պահած խարտյաշ մազերի փունջը դառնում է նուրբ մտորումների նյութ, ծավալվում են խորհրդածություններ սիրո և գեղեցկության շուրջ։

## Եզրակացություն

Մարդկային գրիչն անզոր է նկարագրելու այն խոշտանգումները, որոնց ենթարկվեց Գրիգոր Զոհրապը: Եվրոպական պետությունների աչքի առջև տեղի էր ունենում Մեծ եղեռնը, առաջին ազգասպանությունը: Հայի ճակատագիր, նույն վայրագությունը կատարվում է հինա, նորից Եվրոպայի աչքի առաջ սպանում, գերեվարում, խոշտանգում են անմեղ հայերի: Զոհրապի ճակատագրին են արժանանում բազում հայեր:

Զոհրապը բարձրարժեք մարդ էր, հռչակավոր իրավաբան և անձնազոհ հասարակական գործիչ:

Նրա նորավեպերն ունեն հոգեբանական հարստություն և կենսական ուժ: Զոհրապն ունի վերլուծական, խոհական ձիրք, որի շնորհիվ դիտում է մարդկանց արարքն ու ապրումը: Զոհրապը խոսքի վարպետ է և հրաշալի կառուցող: Մի քանի էջի մեջ նա ստեղծում է բյուրեղյա կերտվածք: Իմաստ կա նրա յուրաքանչյուր բառում:

Բարձր է նաև Զոհրապի լեզվառճական արվեստը: Նա գրել է զուսպ,ճշգրիտ լեզվով, բառերի ու ոճերի ընտրությամբ, բառերի փոքր քանակի մեջ դրել է հարուստ բովանդակություն: Նա բանաստեղծական շնչով, բայց և ճշգրտությամբ ստեղծում է պայծառ գույներից, այրող տարերքից, նրբություններից և նազանքից հյուսված կնոջ հմայիչ պատկերը: Հաճախ մի նախադասությամբ նա արտահայտում է խորիմաստ,թևավոր մտքեր: Զոհրապը նաև ճիշտ վերնագրեր ընտրելու վարպետ է. հրաշալի խտացում է երկու բառից բաղկացած կապակցություն է <<Ճիտին պարտքը>>: Պայուսակը ճիտին պարտքն է,հոգսերի, կարիքի հավիտենական ծանրություն:

<<Երջանիկ մահ>> նովելում սիրած տղամարդու գրկում մեռնելը երջանկություն է:

Զոհրապի նորավեպերը բյուրեղյա կերտվածքներ են, հոգեբանական նրբին պատկերներ: Նրա նորավեպերը թարգմանված են մի շարք լեզուներով և արժանի տեղ ունեն համաշխարհային նորավեպի գանձերի շարքում:

## Օգտագործված գրականության ցանկ


1. Գրիգոր Զոհրապ 1978 էջ՝ 303։
2. Գրիգոր Զոհրապ  1978 էջ՝104, 244, 220։
3. Գրիգոր Զոհրապ <<Էջեր ուղևերի մը օրագրեն>>, Իզմիր 1922  ԺԲ։
4. Գայանե Մկրտչյան մեզ ծանոթ և անծանոթ գրողներ>> 2014 էջ՝321-322։
5. Գայանե Մկրտչյան մեզ ծանոթ և անծանոթ գրողներ>> 2014 էջ՝319-320։